«ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

30.09.2013 20:32

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանական դպրոցը, կարևորելով փաստաբանների համար ստրատեգիական ռազմավարության հմտությունների զարգացումը, ընդհանուր մտահորիզոնի լայնացումը, աշխարհընկալման նոր մոտեցումների ձեռքբերումը, առաջարկում է մասնակցել «Ստրատեգիայի արվեստը» թեմայով դասախոսությանը, որը վարելու է փաստաբան Արտաշես Տեր-Հովհաննիսյանը: Դասախոսության ժամանակ կներկայացվի ստրատեգիական արվեստի զարգացումները, Սուն-ցզիի ստրատեգիայի արվեստի, ինչպես նաև համամարդկային մտածողության հետ կապված այլ հարցեր:

Դասախոսությունը անցկացվելու է **հոկտեմբերի 5-ին, ժամը 12:00-14:00, Բյուրոկրատ գրատանը** (հասցե՝ Սարյան 19՝ Սարյան-Պուշկին խաչմերուկի վրա, մուտքը՝ Սարյան փողոցից): Դասախոսության մասնակցությունը կհաշվարկվի որպես պարտադիր վերապատրաստման ժամ (3 ակադեմիական ժամ):
Գրանցվելու համար **զանգահարել (10) 20-40-93** հեռախոսահամարով, գրել adv.trainings@gmail.com կամ coordinat.trainings@advschool.am էլ. հասցեներին:

Ստորև ներկայացվում է անհրաժեշտ նյութը.

Առաջին անգամ հայ ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում համաշխարհային ստրատագեմության ուսմունքի հիմնադիր Սուն-ցզիի (մ.թ.ա. VI-Vդդ.) <<Ստրատեգիայի արվեստը>>, ինչպես նաև հնագույն Չինաստանի մյուս մեծ զորավար, ստրատեգ Ու-ցզիի (մ.թ.ա. IV դ.) դասական, կոթողային աշխատությունները, որոնք, անցնելով ժամանակի փորձությունը, դասավանդվել են նախ Չինաստանի և Ճապոնիայի, հետո նաև աշխարհի զարգացած երկրների բազմաթիվ ուսումնական հաստատություններում, ռազմական, դիվանագիտական, հետախուզական ծառայության նշանավոր դպրոցներում:

Այս հրաշալի երկերը՝ Ն.Մաքիավելիի և Կ.Ֆոն Կլաուզեվիցի ստեղծագործությունների նման, հիմք են հանդիսացել կառավարման բազմաթիվ տեսությունների ձևավորման համար: Կարծում

ենք, որ սույն երկերը օգտակար կլինեն ռազմավարագիտական մտքի ձևավորմամբ և զարգացմամբ հետաքրքրվողների, դիվանագետների, ՀՀ պաշտպանության նախարարության հրամկազմի, արևելագետների, պատմաբան-բանասերների և, ընդհանրապես, իրենց մտահորիզոնն ընդլայնելու կարոտ ընթերցողների համար:

Թարգմանիչ՝

Դասախոս Արտաշես Տեր- Հովհաննսիյան

Նախորդ նորությունը: ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Հաջորդ նորությունը: ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

29.10.2013 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

30.09.2013ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

04.11.2013ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })